

## ՀԱՅ ԳԵՂՁՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Բ.

ՆՈՒԱԳԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նուագարաններ.— Նուագական երաժշտութիւնը շատ աղքատ է եւ անզարգացած։ Զուտ ժողովրդական է հովուական սրինգը, հանրամարդկային պարկապղուկը, թութակ եւ շուխն (1), մնացածները բոլորն էլ օտար են եւ մենաչնորհ ժողովրդական գուսանների։

**Տարածուած նուագարաններն են.**

Ա.- Փշական՝ (2) սրինգ, թութակ, շուխ կամ չհու, պարկապղուկ, առանց պիպիչի՝ ձայնոցի, զուռնա, նայի կոմնայ, պիպիչաւոր (3)։

Բ.- Լարական, ջութակ (քամանչակամ քեմանչէ), ջանուր (չոնգուր), սանթուն, թամրուռ, սազ եւ թառ։

Գ.- Հարական, թմրուկ, տափ եւ դուռեր։

Սրինգ.— Սրինգը կամ փողը, սրին տեղ տեղ բլուլ կամ դլուլ են ասում, զուտ հովուական ազգային նուագարան է։

Շինում են եղեգնից, փայտից (մանուանդ ծիրանի) եւ նոյն իսկ մետա-

ղից։ Սրինգ նուագելուն ժողովուրդն ասում է փող փշել։

Փողը ձայնում է ամենաբարակ չնչով անգամ, բայց ձայնեցնելը մի քիչ զժուար է։ Պէտք է բերանը փակել մինչեւ կէս, ձախ կողմից, իսկ աջից՝ բաց թողնել։ բերանի եւ փողի շրթունքներն իրար այնպէս յարմարեցնել, ուղիղ մէջտեղում, որ աջից իրար չառնեն՝ մի փոքր բաց մնայ։ Այս բաց տեղից ելնում է փողի ձայնը, որովհետեւ նուագարանը գլանաձեւ է, ծայրէ ծայր բաց եւ ձայնոց չունի։

Փողի երկարութիւնն 40 – 70 հարիւրամետր, հաստութեան տրամագիծն է 2½ – 3 հարիւրամետր։ փորուածքի տրամագիծն է, վերից վար, հաւասարապէս 1½ – 2 հարիւրամետր։ միայն բերանի մօտիկ մէկ հարիւրամետրը նեղանում է 1 – 1½ հարիւրամետր։ կողի հաստութիւնն է 2 – 3 հազարամետր, իսկ բերանի մօտ՝ հազիւ ½ հազարամետր է։ Ունի 10 ծակ, գործածում են վերին ութը, որովհետեւ ցածի երկուսը շատ հեռու է, մատները չեն հասնում, նուագարանն էլ փակոյթ չունի։ Ծակերի յարաբերական հեռաւորութիւնն է առաջնի եւ երկրորդի մէջ 3 հարիւրամետր։ 3-4, 4-5, 5-6, 6-7, 7-8 եւ 8-9 մէկ հարիւրամետր եւ 6-7 հազարամետր։ 9-10 մօտ 4½ հարիւրամետր։ Ծակերի տրամագիծն է 7 հազարամետր։ Առաջին եւ վերջին ծակից դէպի ծայրերն եղած կտորի շա-

1) Ետքէն աւելցուցած է թութակ և շուխն։

2) Առաջ՝ զրած է Շնչական, յետոյ՝ աւրած եւ վերեւը զրած է փշական։

3) Առաջ՝ պարկապղուկը դրած է նայէն յետոյ, ետքէն զայն տեղափոխած է չհու եւ զուռնա բառերուն միջեւ ու աւելցուցած է առանց պիպիչի՝ ձայնոցի եւ պիպիչաւոր բառերը։

փը միշտ փոփոխական է, իսկ 10 ծակի յարաբերական չափն անփոփոխ:

Այս չափերը, 7 զանազան սրնգից հանած, մօտաւոր ճշգութիւն են: Սրնգարար կամ փողարար վարպետները հասարակ դիւզացի են. չափերը որոշում են աւանդական սովորութեամբ եւ տուանց թուարանական հաշիւ անելու. ուստի եւ նուազարանների ձայներն էլ, չառ անգամ, անճիշդ են:

Ծակերի գիրքն այսպէս է: Նուազարանի երեսում, մէկ ուղիղ գծի վերայ են 3, 4, 5, 6, 7, 8 եւ 9 ծակերը. առաջինը՝ ցածից ձախ, երկրորդը՝ աջ եւ տասներորդը՝ վեր, յետեւից եւ քիչ ձախ ընկած:

Սրինգը բռնում են այսպէս: Ցածից, ձախ ձեռքով 3, 4, 5 եւ 6 ծակերն են փակում ճկոյթով, մատնեմատով, միջամատով. իսկ բութ



մատը, յետեւից, յենարան է դառնում նուազարանի ստորին մասի համար: Աջ ձեռքով 7, 8, 9 եւ 10 ծակերն են փակում՝ մատնեմատով, միջամատով, ցուցամատով եւ, յետեւից, բութ մատով. իսկ ճկոյթը, աջ կողքից, յենարան է դառնում նուազարանի միջին մասի համար: Զախ ձեռքի միջամատն ու աջի մատնեմատը որոնք փակում են 5 եւ 7 ծակերը, գրեթէ փակ են պահում:

Փողն ունի զանազան լարուածք. բարեհնչիւն են c<sup>1</sup>, des<sup>1</sup>, g<sup>1</sup> և es<sup>1</sup> սրինգները: Զայնաշարը խառնուրդ է կիսական եւ ամբողջական ելեւէջի, որի ձայնաստիճաններն են՝

1 1/2 1 1/2 1/2 1/2 1/2 1/2 1

Փողի միւս լարուածքներն են h, e<sup>1</sup> և f<sup>1</sup>, աւելի ցած կամ բարձր չենք տեսել:

Այստեղ բերած օրինակները ձև փողի լարուածքովն են: ձև սրնգի ընդհանուր ձայնաշարն է՝




Կիսական լրիւ ձայնաշարից պակա-  
սում են ս' dis<sup>1</sup> և h<sup>1</sup> ձայները, որոնց  
համար առանձին ծակեր չունի նուազա-  
րանը.

• ավ նշանակած հ և cis<sup>1</sup> ձայ-  
ներն էլ փակոյթ չունին՝ նուազել չէ  
կարելի, ուրեմն նուազելի ձայնա-  
շարն է.


Բացի այդ, ավ նշանակած  
fis<sup>1</sup> և gis<sup>1</sup> ձայներին համապատաս-  
խանող 5 և 7 ծակերը մնում են, աւան-

դաբար, գրեթէ փակ, ուրեմն փողի  
հիմնական եօթնաւորն է


որ պարունակում է երկու միացած եւ նման քառունակ



Փող փշելը չորս աստիճան ունի, Մեղմիկ փշելով ելնում են այս ձայ-  
մեղմիկ, մեղմ, միջակ եւ սաստիկ: ները.




Մեղմ փշելով՝



Միջակ փշելով՝



Սաստիկ փշելով՝



Առաջին, երկրորդ եւ չորրորդ ձայնաշարերը միմեանց շարունակութիւն եւ ութեակ բարձր են, իսկ երրորդը պարզ հնգեակ բարձր է երկրորդից. ուրեմն հայ հովուական սրինդը մի ընափող է:


Փողի նուագելի ձայների ստհմանն է ձ<sup>1</sup> - է<sup>2</sup>. Եթէ փակոյթ յարմարցուի, կ'ունենայ ուղիղ երեք ութեակ եւ մի քանի կիսեակ պարունակող կիսաձայնաշար:

Հեշտ ելնում են առաջին, երկրորդ եւ երրորդ ձայնաշարի աստիճանները ձ<sup>1</sup> - ժ<sup>2</sup> երրորդի վերջին ձայնը շ<sup>3</sup> և չորրորդը մինչեւ շ<sup>2</sup> դժուար է. իսկ չորրորդի ժ<sup>3</sup> և է<sup>4</sup> ձայները՝ շատ դժուար:

Չայները հնչում են ձ<sup>1</sup> - է<sup>2</sup> շատ զող, փափուկ, թաւշային եւ քնքոյչ (1): Մեզմ ձայնը (2), մանաւանդ ամենաբարակ եւ ամենանուրը մեզմը, մի խորհրդական մովչութիւն ունի. կարծես հեռու, շատ հեռու ձորում նուագում են եւ բարակ քամին բերում է նուագների ալիք ալիք մարող շունչը: Կէս մեզմն ու կէս ութեղը (3) խագաղ չէ մեղմի պէս, հնչուած է. թէպէտ էլի ունի մի տեսակ քողարկուած լորհրդաւորութիւն:


ժ<sup>2</sup> - է<sup>3</sup> իւրաքանչիւր ձայնի հնչիւնը երեք տեսակ զոյն ունի, պարզ, նուրը եւ բարդ: Պարզ ձայների հնչիւնը պայծառ, եռանդուն եւ միամիտ է: Նուրը հնչիւնը յիշեցնում է մի քիչ ջութակի flageolet ձայները, բայց սոքա շատ

զգայուն են եւ խորհրդաւոր եւ արտայայտում են ուժասպան յուսահատութիւն, անձար կոկիծ ու թախիծ, անմիթար սուկ եւ մխկտացող լաց: Պարզ ձայները կամաց կամաց մեզմանալով, շատ սիրուն, միանում են նուրը հնչիւնի հետ: Իսկ առանձին, միայն նուրը գոյնը, շատ դժուար է ելնում եւ հնչում է անհաստատ: Բարդ զոյնն առաջ է գալի նորանից, որ ձ<sup>1</sup> - է<sup>2</sup> և ժ<sup>2</sup> - է<sup>3</sup> ձայնաշարերը հնչում են միաժամանակ եւ պարզ ութեակներով



Եւ երկու տեսակ խառնուրդ են կազմում: Երբ մեզմ են փշում, զօրեղ է հնչում ժ<sup>1</sup> - է<sup>2</sup> ձայնաշարը եւ թոյլ ժ<sup>2</sup> - է<sup>3</sup>. իսկ երբ զօրեղ են փշում, թոյլ է հնչում ժ<sup>1</sup> - է<sup>2</sup> ձայնաշարը եւ զօրեղ ժ<sup>2</sup> - է<sup>3</sup>: Երկուսն էլ վառվուն, կրակոս են, բայց քիչ խոպոտ ու խանձած ձայն են հանում, թերեւս նուագարանի խողովակի անզոդ լինելուց (1):

շ<sup>2</sup> - շ<sup>3</sup> ձայնաշարն ունի պարզ եւ բարդ զոյն: Առաջինը կարուկ, բայց լերկ, պազ ու ցամաք է. երկրորդը հընչում է երկձայն՝ պարզ զուգահեռական հնգեակներով



թէպէտ հիմնաձայները թոյլ են,

1) Շատ զողէն առաջ՝ նախ դրած է թոյլ, եւ քնքոյչն յետոյ՝ արտայայտութիւն ունին, եսթէն զնչած է այդ չորս բառերը: Կը կարծենք դէղը կոկ բառն է՝ այսպէս ուղղագրուած:

2) Նախ գրած է՝ ձայները, եսթէն զնչած է երը:

3) Գեռագրին մեջ կայ կէս ուժը, որ գրչի վրիպում է. ուղիղն է անշուշտ ուժեղը:

1) Թերեւսէն մինչեւ լինելուց եսթէն աւելցուցած է: Անդող, այսինքն՝ անկոկ:

բայց եղանակից անկապ ու առանձնացած են հնչում:

d<sup>3</sup> - c<sup>4</sup> ձայնաշարն էլ ունի պարզ եւ բարդ հնչիւն: Պարզը սուր, թափանցիկ եւ պայծառ է եւ ճշող չէ: Բարզը d<sup>2</sup> - c<sup>3</sup> ձայնաշարի ճիշդ ութեակ բարձր գոյնն ունի եւ ձայները խռպոտ չեն, այլ պարզ եւ մաքուր.


Իսկ պարզ ձայներով նուագելը գրեթէ անհնարին է:

Փողը շատ ճկուն նուագարան է, կարելի է, իր ձայների եւ յարմարութեան սահմանում, ամէն եղանակ էլ նուագել եւ ամէն գեղարուեստական նրբութիւններով: Իսկ բնաւորութեանը յատուկ առաւելութիւններ, որ ուրիշ չնչական նուագարաններ չունին, հետեւեալներն են՝

1. Զուգահեռական ութեակների, հնգեակների, մինչեւ իսկ եռեակների բարդ հնչիւն.

2. Զանազան գոյնի հնչիւնների արագ եւ գեղեցիկ փոփոխութիւն.

3. Իրան յատուկ մի տեսակ դողդող, որ նման է, գործածութեան եւ արտայատութեան բոլոր եղանակներով, չութակի



Եւ այլ տեսակ դողդողոցնե-

2) Եսթէն աւելցուցած է՝ եւ յարմարութեան:

րին, կամ, երբ շատ արագ է, ջութակի վրայ մատների երերումից առաջացած տատանումին:

Բնդունակ է մի շարք խորհրդաւոր ապաւորութիւններ առաջ բերելու. մանաւանդ մի քանի սրնգով, դաշնակների դողդողը մի ամբողջ բնութիւն է պատկերացնում. կենդանացնում է ջրի գրւդըլալը, հովի հեւալը մենակութեան մէջ եւալըն:

Իսկ ուղղելի պակասութիւններն են՝

1. Ցածի ձայները թոյլ են.

2. Փակոյթներ չունի.

3. Զայների աստիճանները ճիշդ չեն.

4. d<sup>2</sup> - c<sup>3</sup> ձայնաշարի բարդ ձայները վճիտ չեն. գուցէ նորա համար, որ նուագարանի փորուածքի պատերը յդկած ու ողորկ չեն, ուստի օդի հոսանքը ճանապարհին արգելքների է հանդիպում:

5. Վերին ձայները դժուար են ելնում:

Հովուական նուազներ. — Փող փրշողները առաւելապէս հովիւններ են, որոնք ոչխարը ջուրն են տանում, ջրից յետ բերում ու արածացնում են զանազան տեսակի որոշ եղանակներով. Երբեմն էլ, հօտի հանգստացած ժամանակ կամ արածացնելիս, թինկ են մի ծառին կամ մի քարին, կոշտ մատներով շունչ են տալիս անշունչ գործիքի անկենդան ծակերին, սիրտը բաց, հուր ու կրակ են թափում բնութեան դիրկը, կամ խինդ ու ծիծաղ են խոստովանում խօյ ձորերին, բաց հովիտներին եւ զով հովերին, կամ մի դիցազնի կտրճութիւնն են զովում փողի նուազներով եւ մենակութեան մէջ ուժ առնում եւ ոժ տալիս:

Եւ նուրբ ձայնը առաւօտեան բնութեան ողիների չնչի հետ մէկտեղ վեր

է բարձրանում եւ շատ բարձրքում երազի պէս հնչում (1):

Հովուական փողանուագի տեսակներն են՝ հովուական, սիրահարական, դիցաղնական, պարի նուազներ եւ երեւակայութիւններ: Փող նուազում են խաշնարածութեան ժամանակ՝ ցերեկը, իսկ երեկոյեան՝ տան կամ վրանի առաջ:

Պարկապուկլ.—Պարկապուկլ նշանակում է պարկը պղելով, այսինքն սեղմելով, ձգմելով ձայն հանող նուազարան: Պարկապուկով նուազում են առանձնապէս պարի եղանակներ: Այս նուազարանը, ժողովրդի միջից, կամաց կամաց, վերանում է եւ տեղն անցնում է զուռնան կամ նային, որոնցից անբաժան է թմրուկը: Պարկապուկի կազմութիւնն արդէն յայտնի է բոլորին, որովհետեւ համամարդկային նըւագարան է:

Նուազուրդ.—Օտար նուազարանների մասին գրելը ծրագրից դուրս է. յիշելու արժանի են զանազան կարգի եւ տեսակի նուազուրդները, որոնք յայտնի են ժողովրդին զուռնաչի, սազանդար եւ աշուղ անունով եւ ունին տարրեր կազմութիւն:

Զուռնաչիների նուազուրդը պարունակում է երկու զուռնայ եւ մի թմրուկ, կամ երկու նայի եւ մի թմրուկ: Մէկը նուազող, միւսը ձայնակցող, ձայնառութիւն պահող, իսկ թմրուկը՝ չեշտակցութիւնը կամ չափը (2): Սոքա նուազում են Եւ արեւելեան Եւ արեւմտեան եղանակներ (3), առանց երգելու, եւրոպականը ծիծաղելի, ազգայինն անհամ, զի ձայնաստիճանները չեն

1) Այս ֆրազը ետքէն աւելցուցած է մատիտով, դեռ կարծես միայն սեւագրուած քանի լիովին շարադրուած:

2) «Մէկը նուազողէն մինչեւ կամ չափը» ետքէն աւելցուցած է՝ մատիտով:

3) «Եւ արեւելեան... եղանակներ» նախադասութիւնը ետքէն աւելցուցած է:

բոնում, իսկ արեւելեան օտար եղանակները թերի (1)՝ ամէն բան ձեւում են իրենց ճաշակին եւ արուեստին յարմար: Աւելի մաքուր ու զեղեցիկ են հնչում եղանակները, երբ զործ են ածում երկու նայից եւ մի թմրուկից կազմած նուազուրդը:

Սազանդարների նուազուրդն ունի մի թառ, մի ջութակ եւ մի դափ, կամ մի թառ, մի ջանուր եւ մի դափ: Սոքա նուազում ու երգում են ամէն տեսակի եղանակ, բայց աւելի ճաշակաւոր:

Գուսաննական կամ աշուղների նուազուրդն ունի մի ջութակ, մի ջանուր եւ մի սանթուռ, կամ մի ջութակ, մի թառ եւ մի սանթուռ, կամ մի ջանուր, մի թառ եւ մի սանթուռ, կամ մի ջութակ, մի ջանուր եւ մի սանթուռ ու, երբեմն էլ, սանթուռի փոխարէն դափ: Սոքա էլ երգում ու նուազում են ամէն տեսակ եղանակներ, բայց առաւելապէս արար, պարսիկ եւ տաճիկ աշուղական երաժբշտութեան ոճով: Սազանդարներն ու զուսանները միջակ եւ բարձր զասակարգի երաժիշտներն են քաղաքներում. մասնակցում են հարսնիքների, խնջոյքների եւ զանազան հանգէսների, բայց մեծ մասամբ նուազում են սրճարաններում ամսական կամ օրական պայմանով:

Մենանուագ.—Մենանուագ գործ են ածում միայն շրջիկ գուսանները: Սոցա ձեռքին տեսնում էք թառ, սազ, ջանուր կամ ջութակ: Գիւղ գիւղ պտոյտ անելով երգում ու նուազում են ժողովրդական երգեր, ինքնուրոյն կամ օտար եղանակներ եւ պատմում հեքեաթներ, հին ու նոր անցքեր՝ յատուկ երգերով համեմած:

1) Նախապէս զրած է սապէս՝ Սոքա նուազում են, առանց երգելու, ամէն եղանակ, եւրոպական այլանդակած, ազգայինն անհամ, արեւելեան օտար եղանակները թերի. յետոյ՝ մատիտով տուած է այդ նախադասութեան այն ձեւը որ կը տեսնուի վերի:

Բուն գեղջուկ եւ շինական ժողովրդի նուազարաններն են փող, թութակ, չուփ, պարկապղուկ, որոնք նըւագուրդի մէջ չեն մտնում, երբեմն էլ սազ կամ թառ. վերջին երկուսի հետ միանում է յաճախ եւ զափ:

Չուտ նուազական են թութակ, չուփ, պարկապղուկ եւ մասամբ էլ փողն ու զափը:

Եւրոպական գործիքներից, անցեալ դարուցն սկսած, արեւմտեան քաղաքացի Հայերի մէջ մտել են երկու մենանուազ նուազարան(1), flûte à clarinette (2) երկուսն էլ չառ յարգի են:

3. Նուազերգական երաժշտութեան տեսակները.— Նուազերգութիւնը երկու տեսակ է, միայնակ և խմբական: Միայնակն ունի երկու ձեւ, միաժամանակ եւ փոխէ փոխ: Միաժամանակ, երբ երգն ու նուազը ձայնակցում են զուգահեռական միակներով կամ ութեակներով միեւնոյն ժամանակ եւ միեւնոյն եղանակով: Այս ձեւը բուն ժողովրդական է եւ յատուկ է հովուական երաժշտութեան: Փոխէ փոխ, երբ նուազն ու երգը յաջորդում են հերթով, այսպէս. կամ ամրող եղանակը նուազելուց յետոյ երգը կցում, կամ սկսում են նուազել, կցում են երգը, երգի շնչառութեան միջոցին ընդմիջում են նուազը եւ վերջն է, նուազով երգից քաղուածք անում: Փոխէ փոխ նուազարանը փողն է, որ ժողովրդը գործ է ածում երգի հետ: Փողով երգում են հովիները, երեկոյեան հանգստից առաջ, սիրահարական, գիւցաղնական եւ երբեմն էլ պարի եղանակներ:

1) Առաջ՝ զրած է նուազարաններ, յետոյ ջնջած է ները:

2) Ենքը զրած է զերմանական ձեւով՝ Flöte à Klarinette :

Խմբականի ձեւերն են՝ միաժամանակ, փոխէ փոխ, ինչպէս միայնակինը, եւ ձայնառութիւնով:

Զայնառութիւն.— Զայնառութիւնը մի առանձին արուեստ է նուազական եւ երգական երաժշտութեան համար: Զայնառութիւն նշանակում է նուազելիս կամ երգելիս ձայն պահել: Զայնը պահում են չարունակարար՝ մինչեւ եղանակի վերջ, կամ այն տեղերում ուր մի նախադասութիւն է վերջանում եւ բնական շնչի պահանջ կայ: Զայնառութիւնը պէտք է շատ մեղմ պահել, որպէսզի եղանակի ամրողջութիւնից չզատուի եւ նորա միութիւնը չխանգարէ, բայց միեւնոյն ժամանակ, զանազան մտքերի թերերն իրար կապէ, որ եղանակի չնքն անխախտ մնայ: Մի տեսակ հաստատող եւ համաձայնող բնոյթ է կրում (1), իբր ձայնառութիւնը պէտք է պահել եղանակի հիմնաձայնը, բայց երբեմն էլ, յարմարութեան նայելով, վերջաձայնը կամ շեշտաձայնը: Եթէ եղանակը բարդ է, պէտք է վերլուծել, պարզ ձեւերը գտնել եւ յետոյ իրաքանչերի համապատասխան ձայնառութիւնը բռնել՝ աչքի առաջ ունենալով օրէնքը:

Նուազածութեան ժամանակ ձայն են պահում, երբ մի նուազարան մենակ է նուազում, իսկ միւսը, շատ մեղմիկ, առանց զոյն տալու եւ միանուագի տրպաւորութիւնը խանգարելու, մտքի հոսանքն է կապում: Զուռնաչիների նուազուրդի մէջ առաջին զուռնան կամ նային նուազում են բռն եղանակը, իսկ երկրորդները եղանակի ուժին հաւասար զօրութեամբ ձայն պահում: Նայի ձայնառութիւնը հաճելի է, որովհետեւ զոյիկ, փափուկ եւ տկար է. իսկ զուռնաչինը ձանձրացնող, յոզնեցնող եւ

1) «Մի տեսակ . . . կրում» նախադասութիւնը ետքէն աւելցուցած է մատիտով:

ՀՅՄԵցնող է, որովհետեւ ձայնն էլ կարծըր, սաստիկ եւ ուժեղ սուր է, մեղմ չունի:

Նուազարանը մեներգին ձայնառութիւն չէ պահում սովորաբար. պատահած դէպքում էլ, երգելիս շատ մեղմ, տուանց եղանակաւորելու, իսկ նախադասութեան վերջ, ընդհանրապէս, երբ երգիչը շունչ է առնում, իսկոյն մի կարճ բնորոշ նուազ է ընդմիջում, բայց երգն սկսելուն պէս, կրկին դառնում է ձայնառութեան:

Ձայնառութիւնը հայկական գեղջուկ սովորութիւն չէ, այլ օտար (1): Հայ շինականն իր ստեղծած խաղերին ձայն չէ պահում, բայց երբ լսում է մի

տար (գրական բարբառով օտար երգ), իսկոյն էլ համապատասխան ձայնառութիւն է բռնում, մանաւանդ երբ երգն էլ մի քիչ ծանրկէկ է:

Ընդմիջող ձայնառութեան սքանչելի եւ գեղարուեստական ձեւը քիւրտ եղանակներին է յատուկ:

1) Գեղջուկ բար ետքէն աւելցուցած է մատիտով. այլէն յետոյ մատիտով աւելցուցած է եկեղեցական եւ մատիտով աւրած է օտար բար, յետոյ եկեղեցական բառն ալ աւրած է, որով պահած է նախկին օտարը:

2) Առաջ գրած է եղանակների ողին է, ետքէն ուղղած է՝ եղանակներին է յատուկ: